EU funded project
**"Integrated Support for Sustainable Economic Development in Rural Mountainous Areas of Armenia"**







ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող
**«Համապարփակ աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը»**
ծրագիր







ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող
**«Համապարփակ աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը»**
ծրագիր

EU funded project
**"Integrated Support for Sustainable Economic Development in Rural Mountainous Areas of Armenia"**





This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of Shen NGO and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Շեն ԲՀԿ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



Ծրագիրը խթանել է Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի շահառու համայնքների տնտեսական աճը՝ ստեղծելով կայուն աշխատատեղեր և բարձրացնելով տարածաշրջանի տնտեսական մրցունակությունը: Տնտեսական զարգացումը խթանելու համար իրականացվեցին հետևյալ քայլերը.

- գյուղատնտեսական հիմնական արտադրանքի առաջնային արտադրության խթանում,
- գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման հնարավորությունների ստեղծում,
- որպես նորարարություն՝ կենսագազի արտադրության խթանում և դրա կիրառում ջերմատների ջեռուցման և պտուղ-հատապտուղների չորացման նպատակով,

Այս նորարական մոտեցումը իրագործվեց համայնքներում գործող կոոպերատիվների կողմից:



The project has contributed to the local economic growth in beneficiary villages of Gegharkunik marz and Syunik marz by creating sustainable jobs and increasing regional competitiveness. Economic development has been achieved through:

- Promotion of primary production of the main agricultural products of the beneficiary communities
- Development of processing capacities for agricultural production
- Production and use of biogas for heating greenhouses and for drying fruits and berries as an innovative approach.

This innovative system was coordinated by community cooperatives.

# Ծրագրի նպատակներ

### Տնտեսական մրցունակության բարձրացում

Ծրագիրը մրցունակ դարձրեց գյուղատնտեսությունը և ագրոբիզնեսը շահառու համայնքներում: Ստեղծվեցին վերամշակող արտադրամասեր, որոնք տեղական առաջնային արտադրանքի հենքի վրա հավելյալ արժեք են ստեղծում: Արդյունքում բարձրացավ տեղական արտադրողների մրցունակությունը, և աճեցին տնային տնտեսությունների եկամուտները:

### Աշխատատեղերի ստեղծում

Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում ստեղծվեցին 19 «որակյալ» և 72 «սովորական» աշխատատեղեր: Կոոպերատիվները ստեղծեցին այդ աշխատատեղերը գյուղատնտեսության և վերամշակման ոլորտներում: Ծրագրի համատեքստում «որակյալ» են համարվում այն աշխատատեղերը, որոնք պահանջում են մասնագիտական բարձրագույն կրթություն և ապահովում են ամսական նվազագույնը 150,000 դրամ աշխատավարձ:

### Ծրագրի շահառուներ

Գեղարքունիքի մարզի Գեղամասար, Արեգունի, Փամբակ համայնքների և Սյունիքի մարզի Շաղատ, Անգեղակոթ, Շաքի համայնքների վեց կոոպերատիվները:

# The objectives

### To increase economic competitiveness

The project activities have made agriculture and agribusiness in the two clusters of communities more competitive. Agricultural processing units have been set up that create added value on the basis of local primary products. As a result, local producers' competitiveness and households' incomes have increased.

### To create jobs

In total 19 "quality" jobs and 72 "regular" jobs have been created in the framework of the project. Cooperatives have created jobs in the field of agriculture and processing. The "quality" jobs require higher level of education and provide a salary of at least 150 000 AMD.

### Project Beneficiaries

Six cooperatives of Geghamasar, Areguni, Pambak villages in Gegharkunik marz and Shaghat, Angeghakot, Shaki villages in Syunik marz.















## Ծրագրի բաղադրիչներ

1. **Շահառու վեց կոոպերատիվների հզորացում**

   Կոոպերատիվների անդամները և ղեկավարությունը վերապատրաստվեցին հետևյալ ոլորտներում.

   - կոոպերացիայի սկզբունքներ և իրավական կարգավորում
   - շուկայավարման և գործարար հմտությունների զարգացում
   - կոոպերատիվների կառավարում
   - գյուղատնտեսական առաջնային արտադրության ժամանակակից մեթոդներ
   - գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում
   - կենսագազի արտադրություն և կիրառում

2. **Տնտեսական ենթակառուցվածքների առաջնային արտադրության և վերամշակման ոլորտների բարելավում**

   - ոռոգման համակարգերի վերակառուցում
   - արտադրական և վերամշակման միավորների հիմնում
   - ժամանակակից գյուղտեխնիկայի տրամադրում

3. **Այլընտրանքային էներգիայի նոր տեսակի՝ կենսագազի արտադրություն և տնտեսության մեջ կենսագազի կիրառություն**

   - կենսագազի կայանների հիմնում

Կենսագազի կայանների արտադրած էներգիան ուղղվում է ջերմատներին և չորանոցներին։





## Project Components

1. **Six beneficiary cooperatives have been strengthened**

   Members and management of cooperatives have been trained in:

   - Principles and legal regulation of cooperatives
   - Marketing and business skills development
   - Cooperative management
   - Modern methods for primary agricultural production
   - Processing of agricultural products
   - Production and use of biogas

2. **Business related infrastructures in primary production and processing have been developed**

   - Reconstruction of irrigation systems
   - Establishment of processing and production units
   - Provision of modern agricultural machinery

3. **Renewable energy sources for economic diversification have been developed**

   - Biogas plants have been established

The energy generated by biogas plant is used to heat the greenhouses and drying units.

| | |
|---|---|
| Ծրագրի բյուջե՝ | 1,340,995 ԵՎՐՈ |
| ԵՄ դրամաշնորհ՝ | 900,000 ԵՎՐՈ |
| ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ | 225,000 ԵՎՐՈ |
| Ներդրում Շեն ԲՀԿ-ի և շահառուների կողմից՝ | 215,995 ԵՎՐՈ |





| | |
|---|---|
| Project Budget: | 1,340,995 EUR |
| EU contribution: | 900,000 EUR |
| National co-financing: | 225,000 EUR |
| Own contribution of Shen NGO and Beneficiaries: | 215,995 EUR |



## Ծրագրի արդյունքները Սյունիքի մարզում

- Սյունիքի մարզի Շաքի, Շաղատ և Անգեղակոթ գյուղերում ծրագիրն աջակցել է երեք գործող կոոպերատիվներին. հիմնվել են կոոպերատիվների գրասենյակներ, կոոպերատիվների ղեկավարությունը և աշխատակազմը վերապատրաստվել է կոոպերատիվների կառավարման, գյուղատնտեսական արտադրության ժամանակակից մեթոդների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և կենսագազի արտադրության թեմաներով:

- Շաքի և Անգեղակոթ գյուղերում կառուցվել են ինքնահոս ոռոգման համակարգեր՝ 1.5 կմ երկարությամբ Շաքի գյուղում և 3 կմ երկարությամբ Անգեղակոթ գյուղում: Այն 122 հեկտար տարածք ապահովել է ոռոգման ջրով: Այժմ ավելի քան 300 ընտանիք ունի ոռոգման ջուր:

- Շաքի կոոպերատիվին հատկացվել է հացահատիկային մեկ կոմբայն և շարքացան:

- Անգեղակոթ կոոպերատիվին հատկացվել է մեկ տրակտոր և մեկ չորս խոփանի գութան:

- Շաղատում կառուցվել է ծավարաղաց: Այն տարեկան արտադրում է 300 տոննա հաճարի ծավար:

- Անգեղակոթ և Շաքի գյուղերում կառուցվել են հատիկի զտման և քամհարման արտադրամասեր: Յուրաքանչյուր արտադրամասը կարող է վերամշակել մինչև 250 տոննա հացահատիկ:

- Շաղատում կառուցվել է կտավատի ձեթի արտադրամաս, որը տարեկան վերամշակում է մինչև 100 տոննա կտավատ:









## Project results in Syunik Marz

- In Shaki, Shaghat and Angeghakot villages of Syunik marz, the project has supported three existing cooperatives. Cooperatives' offices have been established. Management and staff have been trained in cooperative management, modern methods of agricultural production, processing of agricultural products and biogas production.

- Gravity irrigation systems have been constructed in Shaki and Angeghakot villages: 1.5 km in Shaki village and 3 km in Angeghakot village. It provides 122 hectares of land with irrigation water. More than 300 families have received access to irrigation water.

- One combine harvester and one seeding machine have been provided to Shaki cooperative.

- One tractor and one four-furrow plough have been provided to Angeghakot cooperative.

- Spelt mill in Shaghat has been established. It processes 300 tons of spelt annually.

- Grain refining and winnowing units have been established in Angeghakot and Shaghat villages. Each unit processes up to 250 tons of cereals annually.

- Flaxseed oil production unit has been constructed in Shaghat, which processes up to 100 tons of flaxseed per year.








- Շաքի, Շաղատ, Անգեղակոթ գյուղերում կառուցվել են երեք չորանոցներ 72 մ² աշխատանքային մակերեսով և 25 մ² լվացման արտադրամասով։

- Շաքի, Շաղատ, Անգեղակոթ գյուղերի հեռագնա արոտավայրերում կառուցվել են կթի կայաններ կթվորների և նախրապանի 40 մ² մակերեսով տնակներով, կթի սրահներով և կենդանիների ջրախմոցներով։ Յուրաքանչյուր կթի կայանում տեղադրվել է 4-ական կթի ագրեգատ, որոնք աշխատում են դիզելային գեներատորներով։

- Շաքի, Շաղատ, Անգեղակոթ գյուղերում կառուցվել են կենսագազի երեք փոքր կայաններ։

- Շաքի, Շաղատ, Անգեղակոթ գյուղերում կառուցվել է 120 մ² մակերեսով երեք ջերմոց։

- Three drying units have been constructed in Shaghat, Angeghakot and Shaki villages with 72 m² solar drying space and 25 m² workshop area.

- Milking stations in alpine meadows have been constructed in Shaghat, Shaki and Angeghakot. Shepherd's and milkmaid's house with 40 m² area, milking area, livestock watering space have been constructed. Each station has four milking units powered by diesel generators.

- Three small scale biogas plants have been constructed in Shaki, Shaghat, Angeghakot villages.

- Three greenhouses with 120 m² area have been constructed in Shaki, Shaghat, Angeghakot villages.









## Ծրագրի արդյունքները Գեղարքունիքի մարզում

- Փամբակ, Գեղամասար և Արեգունի գյուղերում ստեղծվել են երեք նոր կոոպերատիվներ։ Հիմնվել են կոոպերատիվների գրասենյակներ, կոոպերատիվների ղեկավարությունը և աշխատակազմը վերապատրաստվել է կոոպերատիվների կառավարման, գյուղատնտեսական արտադրության ժամանակակից մեթոդների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և կենսագազի արտադրության թեմաներով։

- Գեղամասար գյուղում վերակառուցվել է մեկ խորքային հոր։ Այն 80 հեկտարից ավելի տարածք դարձրել է ոռոգելի։

- Արեգունի և Փամբակ գյուղերում վերականգնվել են ինքնահոս ոռոգման համակարգեր՝ 2.3 կմ երկարությամբ Արեգունի գյուղում և 2.4 կմ երկարությամբ Փամբակ գյուղում։ Արդյունքում ոռոգման ջրի կորուստները չեզոքացվել են՝ ոռոգելի դարձնելով 2 գյուղերի 140 ընտանիքների տնամերձ հողակտորները։

- Արեգունի կոոպերատիվին հատկացվել է մեկ տրակտոր, մեկ շարքացան, մեկ չորս խոփանի գութան։

- Գեղամասար գյուղում վերակառուցվել է կենսագազի կայանը։

- Գեղամասարում կենսագազի կայանին կից կառուցվել է 1,300 մ² ջերմոց։

- Արեգունի և Փամբակ գյուղերում կառուցվել են կենսագազի երկու փոքր կայաններ։







- Արեգունի և Փամբակ գյուղերում կառուցվել է 120 քմ երկու ջերմոց:

- Արեգունի գյուղում կառուցվել է մեկ չորանոց 72 մ² աշխատանքային մակերեսով և 25 մ² լվացման արտադրամասով:

- Փամբակ գյուղում հիմնվել է անասնակերի արտադրամաս. հատկացվել է մեկ կերաղաց և մեկ խոտաղաց:

- Գեղամասար, Արեգունի, Փամբակ կոոպերատիվներին հատկացվել է ձեռքի երեք խոտհնձիչ:

- Գեղամասար, Արեգունի, Փամբակ կոոպերատիվներին հատկացվել է կթի տասներկու ագրեգատ:

## Project results in Gegharkunik Marz

- Three new cooperatives were established in Pambak, Geghamasar and Areguni villages. Cooperatives' offices have been established. Management and staff have been trained in cooperative management, modern methods of agricultural production, processing of agricultural products and biogas production.

- One deep well has been reconstructed in Geghamasar village. More than 80 hectares of land has received access to irrigation.









- Rehabilitation of gravity irrigation networks have been conducted in Areguni and Pambak villages: 2.3 km in Areguni village and 2.4 km in Pambak village. As a result, irrigation water losses have been eliminated, and 140 households in two villages received access to irrigation water.

- One tractor, one seeding machine and one 4-furrow plough have been provided to Areguni cooperative.

- Geghamasar biogas plant has been reconstructed.

- Next to the biogas plant in Geghamasar a 1,300 m² greenhouse has been constructed.

- Two small-scale biogas plants have been constructed in Areguni and Pambak villages.

- Two 120 m² greenhouses have been constructed in Areguni and Pambak villages.

- One drying unit has been established in Areguni village with 72 m2 of solar drying space and 25 m² workshop area.

- Animal feed production plant has been established in Pambak. One fodder-mill and one grass-grinding machine were provided.

- Three manual grass-mowing machines were distributed to Geghamasar, Areguni and Pambak cooperatives

- Twelve milking units were distributed to Areguni, Pambak and Geghamasar cooperatives.









## Կարողությունների զարգացում

Կոոպերատիվների վարչական աշխատակազմը, անդամները և աշխատակիցները վերապատրաստվել են հետևյալ ոլորտներում.

- գյուղատնտեսական կոոպերացիա
- կոոպերատիվի կառավարումը
- կոոպերատիվի հաշվապահական հաշվառումը
- շուկայագիտության հիմունքներ կոոպերատիվի համար
- հացահատիկի մշակության լավագույն փորձ
- հատապտուղների և խոտաբույսերի վայրի հավաք՝ շրջակա միջավայրի համար անվնաս մեթոդների կիրառմամբ
- բանջարեղենի և կանաչեղենի ջերմոցային մշակություն
- կենսագազի արտադրություն
- պտղի, հատապտուղների և խոտաբույսերի չորացման տեխնոլոգիա
- կենդանիների առողջություն և արհեստական սերմնավորում
- կոոպերատիվների կողմից տրամադրվող գյուղատնտեսական ծառայություններ








**The EU is improving rural life in Armenia**

**ԵՄ-ն բարելավում է գյուղական կյանքը Հայաստանում**








## Capacity building activities

The management of the cooperatives, cooperative members as well as potential employees of the cooperatives have been trained in the following areas.

- Concept of cooperatives
- Management of cooperatives
- Accounting for cooperatives
- Principles of cooperative marketing
- Best practices of cereals production
- Wild collection of herbs and berries: nature friendly methods
- Greenhouse cultivation of vegetables and greens
- Biogas production
- Drying technology of herbs and berries
- Animal health and artificial insemination
- Introduction of agronomic services by cooperatives





## Աշխատատեղերի ստեղծում

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած Սյունիքի մարզի Շաքի, Շաղատ, Անգեղակոթ կոոպերատիվները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Գեղամասար, Արեգունի, Փամբակ նոր հիմնված կոոպերատիվները ստեղծվել են 19 «որակյալ» և 72 «սովորական» աշխատատեղեր:






## The EU supports job creation in Armenia

## ԵՄ-ն օժանդակում է Հայաստանում աշխատատեղերի ստեղծմանը












### Job creation

Shaki, Shaghat, Angeheqot cooperatives of the Syunik marz supported by the project, as well as Geghamasar, Areguni, Pambak cooperatives of the Gegharkunik Marz established by the project have created 19 "quality" and 72 "regular" jobs.

## Ծրագրի իրականացման թիմ

**ՇԵՆ ԲՀԿ**
ՀՀ Երևան, 0001, Նալբանդյան 110
Էլ.հասցե: info@shen.am
Հեռ.՝ +37410567031, +37460499010

**Մարզային գրասենյակներ՝**

Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Անդրասյան 4
Լյուբա Մանուկյան
Էլ.հասցե՝ lmanukyan@shen.am

Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսական 34/9
Աշոտ Ամիրխանյան
Էլ.հասցե՝ aamirkhanyan@shen.am








## Project Implementation Team

Shen Benevolent NGO
110 Nalbandyan str.,Yerevan 0001,Armenia
Tel.: +37410567031, 37460499010
Email: info@shen.am

**Project Field offices**

4 Andrasyan str.,Vardenis, Gegharkunik, Armenia
Mrs. Lyuba Manukyan
Email: lmanukyan@shen.am

34/9 Sisakan str., Sisian, Armenia
Mr. Ashot Amirkhanyan
Email: aamirkhanyan@shen.am

